## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

*1-04/25-1*

*08.10.2025թ.*

***Լիցենզիա ՔՊԼ-001139***

**Նախագծային կազմակերպություն**՝ «Բլյու Սթրիմ Սոլյուշնս» ՍՊԸ

**Տնօրեն**՝ Հ. Դավթյան

# ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Դիլիջանի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի վերանորոգման ծավալաթերթի և նախահաշվային փաստաթղթերի մշակում**

Երաշխավորվում է «Դիլիջանի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի վերանորոգման ծավալաթերթի և նախահաշվային փաստաթղթերի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին: Նախահաշվային արժեքը կազմում է 177385.76 հազ. ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն:

ՏՆՕՐԵՆ Ա. ԱՍԱՀԱԿՅԱՆ

Փորձաքննության է ներկայացվել նախագիծ կազմված 1 ալբոմից

Գիրք 1- Նախահաշիվ

Նախահաշիվ

Նախահաշիվը կազմված է աշխատանքային նախագծի ծավալների հիման վրա և համաձայն ՀՀ կառավարության 23 հունիսի 2011 թվականի N 879-Ն որոշման : Հաշվարկման հիմք են հանդիսանում 1984 թ. գները և նորմերը, որոնց վրա կիրառվել են հետևյալ գործակիցները`

| | |
|---|---|
| - Հիմնական աշխատավարձ | 2.45844 |
| - Մեքենաների շահագործում | 3.04810 |

Նյութերի գները վերցված են ՀՀ ֆինանսների նախարարության 07.2025 թ. ինֆորմացիոն տեղեկագրից, նրանց վրա կիրառելով հետևյալ գործակիցները`

| | |
|---|---|
| - Նյութերի տեղափոխման ծախսեր | 1.132 |
| - Այլ նյութեր | 1,05 |
| - Պահեստավորման ծախսեր | 1,02 |
| Միջին ամսեկան աշխատավարձի չափ է ընդունվել | 266126 դրամ |
| Նախահաշվում հաշվարկված է նաև` | |
| - Վերադիր ծախսեր | 13,3% |
| - Շահույթ | 11% |
| - Ա.Ա.Հ | 20% |

Նախահաշվում հաշվարկված են նաև համապատասխան լիմիտավորված ծախսեր: Վարչապետի հանձնարարականով իրականացվող ՛՛300 դպրոց և 500 մանկապարտեզ՛՛ ծրագրի շրջանակներում պատվիրատուի առաջադրանքով տվյալ աշխատանքների համար կազմվել է միայն նախահաշիվ:

Դիտարկելով փորձաքննության ներկայացված նյութերը «Նախագծերի փորձաքննություն» ՍՊԸ-ն նշում է , որ`

1. Նախահաշվային գործակիցները համապատասխանում են ՀՀ օրենսդրության ու նորմատիվ փաստաթղթերի և նախագծային առաջադրանքի պահանջներին:

2. Նախահաշիվներին առընչվող շեղումների վերացման ուղղությամբ առաջարկված փոփոխությունները, լրացումները այլընտրանքային լուծումները քննարկվել են նախագծային կամզակերպության հետ համատեղ: Մասնաորապես կիրառվել էին սխալ գործակիցներ և տվյալ ամսվան չհամապատասխանող արժեքներ, որոնք շտկվել են:

Ելնելով վերը նշվածից **«Նախագծերի փորձաքննություն» ՍՊԸ-ի** փորձաքննությունը ԵԶՐԱԿԱՑՆՈՒՄ է, Երաշխավորվում է նախագծային փաստաթղթերի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին և ԵՐԱՇԽԱՎՈՐՎՈՒՄ Է ՀԱՍՏԱՏՄԱՆ:

Փորձագետ՝ Ա.Հարությունյան